368 Ծնորհացդ խոսքը կլսեմ

1. Ծնորհացդ խոսքը կլսեմ
Խոնարհ սրտով և հեզ,
Պատվերդ պիտի, Տե՛ր, կատարեմ,
Պիտի հիշեմ զՔեզ:

2. Սիրով մարմինդ պարգևեցիր՝
Երկնից հաց, որ ուտեմ,
Ուխտիդ գավաթն ալ ձեռքս տվիր,
Որ Քեզ, Տե՛ր, միշտ հիշեմ:

3. Կրնա՞մ մոռնալ Գեթսեմանը
Կամ հոն տագնապդ չտեսնել,
Արյուն-քրտինքդ սոսկալի
Եւ Քեզ, Տե՛ր, չհիշել:

4. Գառն Աստծո, առ Գողգոթա
Երբ աչքս դարձնեմ
Ու Քեզ տեսնեմ խաչիդ վրա,
Ինչպե՞ս Քեզ չհիշեմ:

5. Ինծի համար կրած ցավերդ,
Քանի որ շունչ կառնեմ,
Ո՜հ, Տեր Հիսուս, Քու գութդ ու սերդ
Անշուշտ պիտի հիշեմ:

6. Եվ երբ մահկանացու ճամբաս
Ալ իր վախճանն գտնե,
Երբոր Արքայությամբդ գաս,
Դուն, ո՛վ Տեր, զիս հիշե: